ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՇՄԳՄՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/15-2/3

ք.Գյումրի 12 մարտի 2018թ.

<<Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց>> ՓԲԸ-ն ի դեմս գործադիր տնօրեն Աշոտ Կուրղինյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Բ. Թադևոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ **ապրանք**), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,

2.1.8 Ընել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է ***3 095 280/երեք միլիոն իննսունհինգ հազար երկու հարյուր ութսուն/ՀՀ դրամ***, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) ***լրացուցիչ համաձայնագրով կնքված վճարման ժամանակացույցի համաձայն*** նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և **անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Եթե մեկ տարվա ընթացքում համապատասխան ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում,ապա պայմանագիրն դառնում է առոչինչ:-**

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[2]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

---

[2] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[3]

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց>> ՓԲԸ	**<<Կոնցեռն-էներգոմաշ>> ՓԲԸ**
ք. Գյումրի, Գ. Նժդեհի 5	ք. Երևան, Արզումանյան 32-10
Ինեկոբանկ Գյումրի մ/ճ	,Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան ՓԲԸ
Հ/Հ 22050123000211001	Հ/Հ 217002182558001
ՀՎՀՀ 05501939	ՀՎՀՀ 01210095
	Տնօրեն՝ Բ. Թադևոսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

[3] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 2
12 մարտի 2018թ. կնքված
ՇՄԳՄՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/15-2/3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման					
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն*	ենթակա քանակը	ժամկետը**			
											I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ
14	33691162/345	Էկոտերջենտ լ-թ (59 մլ X 12) EcoTergent	Roche Diagnostics Գերմանիա	59 մլ x 12, 15-25 աստիճան ջերմություն, Որակի սերտիֆիկատի առկայություն	տուփ	282550	282550	1	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5	1	1	0	0	0
25	33691162/375	Տեստոստերոն քանակական որոշման թեստ-հավաքածու Testosterone G2 Elecsys cobas e100	Roche Diagnostics Գերմանիա	Էլեկսիս Տեստոստերոն (Elecsys Testosterone) Տեստոստերոնի որոշման քանակական տեստ-հավաքածու:Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար :Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ. Ֆորմատ՝ 100 որոշում:Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա:Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն , For In Vitro Diagnostic	տուփ	90700	90700	1	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5	1	0	1	0	0
26	33691162/376	Տեստոստերոն կալիբրատոր Testosterone G2 CS G2 Elecsys V2.1	Roche Diagnostics Գերմանիա	Էլեկսիս Տեստոստերոն կալիբրատոր (Elecsys Testosterone CalSet):Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար:Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ. Ֆորմատ՝ 4x1մլ: Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic	տուփ	31490	31490	1	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5	1	0	1	0	0

27	33691162/377	Դեհիդրոէպիանդոստերոն-սուլֆատ քանակական որոշման թեստ-հավաքածու DHEA-S Elecsys cobas e 100	Roche Diagnostics Գերմանիա	Էլեկսիս Դեհիդրոէպիանդոստերոն-սուլֆատ (DHEA-S)Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ.Ֆորմատ՝100 տեստ :Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն,For In Vitro Diagnostic	տուփ	96030	96030	1	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5	1	0	1	0	0
28	33691162/378	Դեհիդրոէպիանդոստերոն-սուլֆատ կալիբրատոր DHEA-S CS Elecsys	Roche Diagnostics Գերմանիա	Էլեկսիս Դեհիդրոէպիանդոստերոն-սուլֆատ կալիբրատոր (DHEA-S CalSet)Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ.Ֆորմատ՝ 4x1 մլ:Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն,For In Vitro Diagnostic	տուփ	31490	31490	1	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5	1	0	1	0	0
29	33691162/379	Լյուտեինացնող հորմոնի քանակական որոշման թեստ-հավաքածու LH Elecsys cobas e 100	Roche Diagnostics Գերմանիա	Էլեկսիս Լյուտեինացնող հորմոն (Elecsys LH) Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ:Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/ պլազմա:Ֆորմատ՝ 100 որոշում:Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն , For In Vitro Diagnostic	տուփ	64020	64020	1	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5	1	0	1	0	0
30	33691162/380	Լյուտեինացնող հորմոնի կալիբրատոր LH G2 CS Elecsys	Roche Diagnostics Գերմանիա	Էլեկսիս Լյուտեինացնող հորմոն կալիբրատոր (Elecsys LH CalSet)Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար:Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ. Ֆորմատ՝ 4x1 մլ:Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն , For In Vitro Diagnostic	տուփ	31490	31490	1	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5	1	0	1	0	0

31	33691162/381	Պրոլակտին հորմոնի քանակական որոշման թեստ-հավաքածու Prolactin G2 Elecsys cobas e 100 v2.1	Roche DiagnosticsԳերմանիա	Էլեկսիս պրոլակտին հորմոն (Elecsys Prolactin),պրոլակտին հորմոն ի քանակական որոշման տեստ-հավաքածու:Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար:Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ.Ֆորմատ՝ 100 որոշում:Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/ պլազմա:Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն , For In Vitro Diagnostic	տուփ	81610	163220	2	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5	2	0	2	0	0
32	33691162/382	Պրոլակտին կալիբրատոր Prolactin G2 CS Elecsys	Roche Diagnostics Գերմանիա	Էլեկսիս պրոլակտին կալիբրատոր (Elecsys Prolactin CalSet) Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ. Ֆորմատ՝ 4x1 մլ Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/ պլազմա Ֆիրմային նշանի առկայությունը Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 , For In Vitro Diagnostic	տուփ	31490	62980	2	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5	2	1	0	1	0
33	33691162/383	Ազատ թիրոքսինի քանակական որոշման թեստ-հավաքածու FT4 G2 Elecsys cobas e200	Roche Diagnostics Գերմանիա	Էլեկսիս ազատ թիրոքսին (Elecsys FT4) Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ:Ֆորմատ՝ 200 որոշում :Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/ պլազմա:Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն , For In Vitro Diagnostic	տուփ	64900	129800	2	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5	2	1	0	1	0
34	33691162/384	Ազատ թիրոքսինի կալիբրատոր FT4 G2 CS Elecsys	Roche Diagnostics Գերմանիա	Էլեկսիս ազատ թիրոքսինի կալիբրատոր (Elecsys FT4 CalSet):Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար՝Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ:Ֆորմատ՝ 4x1 մլ:Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն , For In Vitro Diagnostic	տուփ	31490	62980	2	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5	2	1	0	1	0

35	33691162/385	Թիրեոտրոպ հորմոնի քանակական որոշման թեստ-հավաքածու TSH Elecsys cobas e 200	Roche Diagnostics Գերմանիա	Էլեկսիս Թիրեոտրոպ հորմոն (Elecsys TSH) Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ:Ֆորմատ՝ 200 որոշում:Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/ պլազմա:Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2առկայություն, For In Vitro Diagnostic	տուփ	64900	454300	7	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5	7	2	2	1	2
36	33691162/386	Թիրեոտրոպ հորմոնի կալիբրատոր TSH CS Elecsys V2	Roche Diagnostics Գերմանիա	Էլեկսիս Թիրեոտրոպ հորմոն կալիբրատոր (Elecsys TSH CalSet) Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար:Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ.Ֆորմատ՝ 4x1.3 մլ:Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն , For In Vitro Diagnostic	տուփ	31490	94470	3	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5	3	1	1	0	1
37	33691162/387	Հակաթիրոիդ պերոքսիդազի հակամարմինների քանակական որոշման թեստ-հավաքածու Anti-TPO Elecsys cobas e 100 v3	Roche Diagnostics Գերմանիա	Էլեկսիս Հակաթիրոիդ պերոքսիդազի հակամարմիններ (Elecsys Anti-TPO) Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ:Ֆորմատ՝ 100 որոշում:Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/ պլազմա:Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2առկայություն , For In Vitro Diagnostic	տուփ	113730	227460	2	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5	2	1	0	1	0
38	33691162/388	Հակաթիրոիդ պերոքսիդազի հակամարմինների կալիբրատոր Anti-TPO CS Elecsys	Roche Diagnostics Գերմանիա	Էլեկսիս Հակաթիրոիդ պերոքսիդազի հակամարմիններ կալիբրատոր (Elecsys Anti-TPO CalSet)Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար:Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ.Ֆորմատ՝ 4 x1.5 մլ:Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն , For In Vitro Diagnostic	տուփ	31490	62980	2	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5	2	1	0	1	0

39	33691162/389	Կլինսել CleanCell Elecsys cobas e	Roche Diagnostics Գերմանիա	Էլեկսիս Կլինսել (Elecsys Cleancell) Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ:Ֆորմատ՝ 6 X 380 մլ փաթեթավորումով: Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 , For In Vitro Diagnostic	տուփ	25660	128300	5	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5	5	2	1	1	1
40	33691162/390	ՊրոսելProCell Elecsys cobas e	Roche DiagnosticsԳերմանիա	Էլեկսիս Պրոսել (Elecsys procell)Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համարՄեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ:Ֆորմատ՝ 6 X 380 մլ:Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում:Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 , For In Vitro Diagnostic	տուփ	25660	128300	5	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5	5	2	1	1	1
41	33691162/391	Միկրոկյուվետներ ASSAY CUP Elecsys 2010/cobas e411	Roche Diagnostics Գերմանիա	Էլեկսիս միկրոկյուվետներ (Elecsys Assay cup)Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար:Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ:Ֆորմատ՝ 60x60միկրոկյուվետ:Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն , For In Vitro Diagnostic	տուփ	45710	45710	1	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5	1	1	0	0	0
42	33691162/392	Ծայրադիրներ ASSAY TIP Elecsys 2010/cobas e 411	Roche Diagnostics Գերմանիա	Էլեկսիս ծայրադիրներ (Elecsys Assay tips)Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար:Մեթոդ՝Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ:Ֆորմատ՝ 30 x 120 ծայրադիր:Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն , For In Vitro Diagnostic	տուփ	47440	47440	1	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5	1	1	0	0	0
43	33691162/393	Պրեսիկոնտրոլ ունիվերսալ PreciControl Universal Elecsys V2	Roche Diagnostics Գերմանիա	Էլեկսիս պրեսիկոնտրոլ ունիվերսալ (Elecsys precicontrol universal) կոնտրոլ Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ:Ֆորմատ՝ 4x3 մլ:Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն , For In Vitro Diagnostic	տուփ	30190	30190	1	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5	1	1	0	0	0

44	33691162/394	Սիսվոշ Sys Wash Elecsys cobas e	Roche Diagnostics Գերմանիա	Էլեկսիս սիսվոշ (Elecsys Syswash) Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ:Ֆորմատ՝ 500 մլ:Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic	տուփ	5170	20680	4	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5	4	2	1	0	1
45	33691162/395	Տրիյոդթիրոնինի քանակական որոշման թեստ-հավաքածու T3 Elecsys cobas e 200	Roche Diagnostics Գերմանիա	Էլեկսիս տրիյոդթիրոնին (Elecsys T3) Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ:Ֆորմատ՝ 200 որոշում :Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/ պլազմա:Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն , For In Vitro Diagnostic	տուփ	70400	70400	1	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5	1	1			
46	33691162/396	Տրիյոդթիրոնինի կալիբրատոր T3 CS Elecsys	Roche Diagnostics Գերմանիա	Էլեկսիս տրիյոդթիրոնին կալիբրատոր (Elecsys T3 CalSet)Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար:Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ.Ֆորմատ՝ 4x1 մլ:Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն , For In Vitro Diagnostic	տուփ	31490	31490	1	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5	1	1			
47	33691162/397	Ինսուլինի քանակական որոշման թեստ-հավաքածու Insulin Elecsys cobas e 100	Roche Diagnostics Գերմանիա	Էլեկսիս Ինսուլին (Elecsys Insulin) Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ:Ֆորմատ՝100 որոշում:Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/ պլազմա:Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն , For In Vitro Diagnostic	տուփ	102440	102440	1	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5	1	1			
48	33691162/398	Ինսուլինի կալիբրատոր Insulin CS Elecsys	Roche Diagnostics Գերմանիա	Էլեկսիս Ինսուլինի կալիբրատոր (Elecsys Insulin CalSet)Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար:Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ.Ֆորմատ՝ 4x1 մլ:Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն , For In Vitro Diagnostic	տուփ	31490	31490	1	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5	1	1			

49	33691162/399	Պրեսիկոնտրոլ մուլտիմարկեր PreciControl Multimarker Elecsys	Roche Diagnostics Գերմանիա	Էլեկսիս պրեսիկոնտրոլ մուլտիմարկեր (PreciControl Multimarker)Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար:Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ. Ֆորմատ՝6x2 մլ :Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic	տուփ	109960	109960	1	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5	1	1			
50	33691162/400	C Պեպտիդի քանակական որոշման թեստ-հավաքածուC-Peptide Elecsys cobas e 100	Roche DiagnosticsԳերմանիա	Էլեկսիս C Պեպտիդ (Elecsys C-peptide) C Պեպտիդի քանակական որոշման տեստ-հավաքածու:Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար:Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ:Ֆորմատ՝ 100 որոշում:Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/ պլազմա:Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում:Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 , For In Vitro Diagnostic	տուփ	155670	155670	1	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5	1	1			
51	33691162/401	C Պեպտիդի կալիբրատոր C-Peptide CS Elecsys	Roche Diagnostics Գերմանիա	Էլեկսիս C Պեպտիդ կալիբրատոր (Elecsys C-peptide CalSet):Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ.Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար:Ֆորմատ՝ 4x1 մլ:Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic	տուփ	33100	33100	1	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5	1	1			
52	33691162/402	AntiTG քանակական որոշման թեստ-հավաքածու Anti-TG Elecsys cobas e 100 v4	Roche Diagnostics Գերմանիա	Էլեկսիս Տիրեոգլոբուլինի նկատմամբ հակամարմիններ (Elecsys Anti-Tg)Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ:Ֆորմատ՝ 100 որոշում:Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/ պլազմա:Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն , For In Vitro Diagnostic	տուփ	113730	113730	1	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5	1	1			
53	33691162/403	AntiTG կալիբրատոր Anti-TG CS Elecsys	Roche Diagnostics Գերմանիա	Էլեկսիս Տիրեոգլոբուլինի նկատմամբ հակամարմինների կալիբրատոր (Elecsys Anti-Tg CalSet)Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար:Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ.Ֆորմատ՝ 4 x1.5 մլ:Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝ 2-8C	տուփ	31490	31490	1	ք. Գյումրի, Գարեգին	1	1			

				ջերմաստիճանում, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն , For In Vitro Diagnostic					Նժդեհի 5					
54	33691162/404	Կորտիզոլ քանակական որոշման թեստ-հավաքածու Cortisol G2 Elecsys cobas e 100	Roche Diagnostics Գերմանիա	ԷլեկսիսԿորտիզոլ (Elecsys Cortisol) Կորտիզոլի քանակական որոշման տեստ-հավաքածու:Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար:Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ:Ֆորմատ՝ 100 որոշում:Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/ պլազմա:Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում:Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 , For In Vitro Diagnostic	տուփ	97450	97450	1	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5	1	1			
55	33691162/405	Կորտիզոլ կալիբրատոր Cortisol G2 CSElecsys	Roche Diagnostics Գերմանիա	Էլեկսիս Cortisol կալիբրատոր (Elecsys Cortisol CalSet):Մեթոդ՝ Էլեկտրոխեմիլումինեսցենտային անալիզ.Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար:Ֆորմատ՝ 4x1 մլ:Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic	տուփ	31480	31480	1	ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5	1	1			
							3095280							

Նանոթություն

*Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 5 հասցեով:

**Մատակարարումն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում

Գնման գործընթացը կազմակերպվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով:

ԳՆՈՐԴ

<<Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց>> ՓԲԸ

ք. Գյումրի, Գ. Նժդեհի 5

Ինեկոբանկ Գյումրի մ/ճ

Հ/Հ20501230002110001

ՀՎՀՀ 05501939

(ստորագրություն)Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲԸ

ք. Երևան, Արզումանյան 32-10

,Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան ՓԲԸ

Հ/Հ 217002182558001

ՀՎՀՀ 01210095

Տնօրեն՝ Բ. Թադևոսյան

(ստորագրություն)Կ.Տ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

12.03.2018թ. կնքված N ՇՄԳՄՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/15-2/3 գնման պայմանագրի

ք. Գյումրի *13.03.2018թ.*

<<Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց>> ՓԲԸ, ի դեմս տնօրեն Աշոտ Կուրղինյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Բ. Թադևոսյանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, հիմք ընդունելով 12.03.2018թ. կնքված N ՇՄԳՄՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/15-2/3 պայմանագրի 3.2 և 8.1 կետերը, ինչպես նաև հաշվի առնելով, որ նախատեսվել են ֆինանսական միջոցներ, կնքեցին սույն համաձայնագիրը, որով որոշեցին հաստատել պայմանագրի ֆինանսական պարտավորությունների վճարման ժամանակացույցը (կցվում է)՝ պայմանագրի գործողության ժամկետը նախատեսելով մինչև 2018թ. դեկտեմբերի 20-ը և սահմանելով, որ սույն պայմանագրի պայմանները տարածվում են կողմերի միջև 2018թ. մարտի 12-ից ծագած հարաբերությունների վրա:

Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց>> ՓԲԸ	**<<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲԸ**
ք. Գյումրի, Գ. Նժդեհի 5	ք. Երևան, Արզումանյան 32-10
Ինեկոբանկ Գյումրի մ/ճ	,Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստանե ՓԲԸ
Հ/Հ20501230002110 01	Հ/Հ 217002182558001
ՀՎՀՀ 05501939	ՀՎՀՀ 01210095
----------	Տնօրեն՝ Բ. Թադևոսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	

Հավելված N 2
12 մարտի 2018թ. կնքված
ՇՄԳՄՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/15-2/3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում**				
			I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	Ընդամենը
14	33691162/345	Էկոտերջենտ լ-թ (59 մլ X 12) EcoTergent	282550				282550
25	33691162/375	Տեստոստերոն քանակական որոշման թեստ-հավաքածու Testosterone G2 Elecsys cobas e100		90700			90700
26	33691162/376	Տեստոստերոն կալիբրատոր Testosterone G2 CS G2 Elecsys V2.1		31490			31490
27	33691162/377	Դեհիդրոէպիանդրոստերոն-սուլֆատ քանակական որոշման թեստ-հավաքածու DHEA-S Elecsys cobas e 100		96030			96030
28	33691162/378	Դեհիդրոէպիանդրոստերոն-սուլֆատ կալիբրատոր DHEA-S CS Elecsys		31490			31490
29	33691162/379	Լյուտեինացնող-հորմոնի քանակական որոշման թեստ-հավաքածու LH Elecsys cobas e 100		64020			64020
30	33691162/380	Լյուտեինացնող հորմոնի կալիբրատոր LH G2 CS Elecsys		31490			31490
31	33691162/381	Պրոլակտին հորմոնի քանակական որոշման թեստ-հավաքածու Prolactin G2 Elecsys cobas e 100 v2.1		163220			163220

			I	II	III		
32	33691162/382	Պրոլակտին կալիբրատոր Prolactin G2 CS Elecsys	31490		31490		62980
33	33691162/383	Ազատ թիրոքսինի քանակական որոշման թեստ-հավաքածու FT4 G2 Elecsys cobas e200	64900		64900		129800
34	33691162/384	Ազատ թիրոքսինի կալիբրատոր FT4 G2 CS Elecsys	31490		31490		62980
35	33691162/385	Թիրեոտրոպ հորմոնի քանակական որոշման թեստ-հավաքածու TSH Elecsys cobas e 200	129800	129800	64900	129800	454300
36	33691162/386	Թիրեոտրոպ հորմոնի կալիբրատոր TSH CS Elecsys V2	31490	31490		31490	94470
37	33691162/387	Հակաթիրոիդ պերոքսիդազի հակամարմինների քանակական որոշման թեստ-հավաքածու Anti-TPO Elecsys cobas e 100 v3	113730		113730		227460
38	33691162/388	Հակաթիրոիդ պերոքսիդազի հակամարմինների կալիբրատոր Anti-TPO CS Elecsys	31490		31490		62980
39	33691162/389	Կլինսել CleanCell Elecsys cobas e	51320	25660	25660	25660	128300
40	33691162/390	Պրոսել ProCell Elecsys cobas e	51320	25660	25660	25660	128300
41	33691162/391	Միկրոկյուվետներ ASSAY CUP Elecsys 2010/cobas e411	45710				45710
42	33691162/392	Ծայրադիրներ ASSAY TIP Elecsys 2010/cobas e 411	47440				47440
43	33691162/393	Պրեսիկոնտրոլ ունիվերսալ PreciControl Universal Elecsys V2	30190				30190
44	33691162/394	Սիսվոշ Sys Wash Elecsys cobas e	10340	5170		5170	20680
45	33691162/395	Տրիյոդթիրոնինի քանակական որոշման թեստ-հավաքածու T3 Elecsys cobas e 200	70400				70400
46	33691162/396	Տրիյոդթիրոնինի կալիբրատոր T3 CS Elecsys	31490				31490
47	33691162/397	Ինսուլինի քանակական որոշման թեստ-հավաքածու Insulin Elecsys cobas e 100	102440				102440
48	33691162/398	Ինսուլինի կալիբրատոր Insulin CS Elecsys	31490				31490
49	33691162/399	Պրեսիկոնտրոլ մուլտիմարկեր PreciControl Multimarker Elecsys	109960				109960

50	33691162/400	C Պեպտիդի քանակական որոշման թեստ-հավաքածու C-Peptide Elecsys cobas e 100	155670				155670
51	33691162/401	C Պեպտիդի կալիբրատոր C-Peptide CS Elecsys	33100				33100
52	33691162/402	AntiTG քանակական որոշման թեստ-հավաքածու Anti-TG Elecsys cobas e 100 v4	113730				113730
53	33691162/403	AntiTG կալիբրատոր Anti-TG CS Elecsys	31490				31490
54	33691162/404	Կորտիզոլ քանակական որոշման թեստ-հավաքածու Cortisol G2 Elecsys cobas e 100	97450				97450
55	33691162/405	Կորտիզոլ կալիբրատոր Cortisol G2 CSElecsys	31480				31480
		ԸՆԴԱՄԵՆԸ	**1761960**	**726220**	**389320**	**217780**	**3095280**

ԳՆՈՐԴ

<<Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց>> ՓԲԸ

ք. Գյումրի, Գ. Նժդեհի 5

Ինեկոբանկ Գյումրի մ/ճ

Հ/Հ20501230002110 01

ՀՎՀՀ 05501939

(ստորագրություն)

Կ.Տ

ԱՃԱՌՈՂ

<<Կոնցեռն-էներգոմաշ>> ՓԲԸ

ք. Երևան, Արզումանյան 32-10

,էյչ-էս-Բի-Սի բանկ Հայաստան ՓԲԸ

Հ/Հ 217002182558001

ՀՎՀՀ 01210095

Տնօրեն՝ Բ. Թադևոսյան

(ստորագրություն)